ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒՄ

313 թ. Միլանի հրովարտակով հռոմեական կայսր Կոստանդին Մեծի կողմից քրիստոնեությունը հավասար ճանաչվեց այլ կրոնների: Ստանալով կայսեր հովանավորությունը՝ Դ. դարի կեսերից քրիստոնեական պատկերագրությունն սկսեց ազատ դրսեւորվել եւ զարգանալ: Պատկերագրական կանոնների ձեւավորման եւ հետագա դարերում դրանց փոփոխությունների ուսումնասիրության համար կարեւոր աղբյուրագիտական արժեք ունեն բյուզանդական դրամները:

Դ. դարի հեղինակ Լակտանտիոսը վկայում է, որ 312 թ. Մուլվիյան կամրջի մոտ Մաքսենտիոսի դեմ ճակատամարտից առաջ Կոստանդին Մեծին տեսիլք է երեւում, ըստ որի՝ եթե կայսրն իր զինվորների վահանների վրա պատկերի X-P նշանը՝ ☧ (Քրիստոսի անվան մենագիրը), ապա Աստծո զորությամբ կհաղթի: Քրիստոնեության այդ ամենավաղ խորհրդանիշներից մեկը, որը նրան հաղթանակ բերեց, որոշ ժամանակ անց՝ 320-ականներից, պատկերվում է Կոստանդինի պղնձե ֆոլիսների դարձերեսին: Դրամների վրա հայտնված հաջորդ քրիստոնեական նշանը խաչն էր, որն առաջին անգամ պատկերվել է Վալենտինիանոս Ա. կայսեր օրոք (364-375): Սակայն բյուզանդական արվեստի վաղ փուլին բնորոշ անտիկ գեղարվեստական ավանդույթից քրիստոնեականին անցումը դրամների պատկերագրության մեջ դանդաղ եւ երկարատեւ գործընթաց էր: Հելլենիստական պատկերագրության վերջին նշույլները բյուզանդական դրամներից վերջնականապես անհետացան միայն Է. դարում: Հռոմի քրիստոնյա կայսրերը դրամների դարձերեսին նախ Վիկտորիայի պատկերը փոխարինեցին խաչակիր գավազան բռնած հրեշտակի պատկերով, անուհետեւ՝ միայնակ մեծադիր խաչով: Այս շրջադարձային փոփոխությունը տեղի ունեցավ Տիբերիոս Բ. կայսեր օրոք (578-582), երբ ձեւավորվեց դրամների դարձերեսի նոր տիպ, այն է՝ ատփիճանավոր հիմքի վրա կանգնեցված զորավոր խաչը, որը Քրիստոսի խաչելության վայր Գողգոթայի խորհրդանիշն էր:

Դեռեւս քրիստոնեության տարածման վաղ փուլում Քրիստոսի մարդկային եւ աստվածային բնության շուրջ ծագում են դավանաբանական վեճեր, որոնք հետագայում հանգեցնում են Ընդհանրական Եկեղեցու պառակտմանը: Դավանաբանական վիճաբանություններն ու հակասություններն իրենց անմիջական դրսեւորումն են գտնում կրոնական պատկերագրության մեջ՝ մեծ ազդեցություն թողնելով գեղարվեստական կանոնների ձեւավորման վրա:

Վաղ շրջանում Քրիստոսի պատկերումը դրամների վրա բացառիկ բնույթ է կրել եւ հանդիպում է միայն հատուկ ծիսական թողարկումներում: Դրանցից առաջինը Մարկիանոս կայսեր (450-457) եւ Պուլխերիայի[1] (նկ. 1), մյուսը՝ Ադրիանոսի (491-518) եւ Արիադնեի[2] ամուսնության կապակցությամբ թողարկված սոլիդներն են: Այդ հազվագյուտ դրամների դարձերեսին Քրիստոսը կանգնած է կայսերական զույգի միջեւ՝ օրհնելով նրանց ամուսնությունը: Ամուսնական ծիսակատարության պատկերման նման հորինվածքը քրիստոնյա աշխարհում լայն տարածում ուներ, որի մասին վկայում են նմանատիպ պատկերագրությամբ ամուսնական մատանիները (նկ. 2), մեդալիոնները, մանրանկարները եւ այլն: Քրիստոսի պատկերը, որպես առանձին դրամական տիպ, ի հայտ է գալիս ավելի ուշ՝ Է. դարի վերջում: Որոշ ընդհատումից հետո՝ Թ. դարից մինչեւ ԺԵ. դարի կեսը՝ Բյուզանդական կայսրության անկումը, Քրիստոսին պատկերելը պարտադիր է դառնում գրեթե բոլոր տիրակալների թողարկումներում: Դրամների վրա Քրիստոսի պատկերի փոփոխությունները հնարավորություն են ընձեռում հետեւելու Նրա կերպարի դավանաբանական մեկնության մեջ տեղի ունեցած զարգացումներին եւ դրանց մեջ կայսրերի ունեցած վերաբերմունքին:

Հուստինիանոս Բ. կայսրն առաջինն էր, որ թողարկեց Քրիստոսի պատկերով ոսկե եւ արծաթե դրամներ՝ իր կառավարման երկու շրջանում՝ 685-695 եւ 705-711 թվականներին: Հուստինիանոս Բ.-ի սոլիդի վրա Քրիստոսի պատկերումը նախապատկերամարտական շրջանի առաջին եւ միակ այդպիսի փորձն է: Այն հավաստի աղբյուր է կերպարի աստվածաբանական եւ գեղարվեստական մեկնաբանության ընթացքի մասին, հատկապես որ այդ շրջանի քրիստոնեական քիչ պատկերներ են հասել մինչեւ մեր օրերը:

Մինչ նոր կրոնի օրինականացումը, արդեն ձեւավորվել էր քրիստոնեական պատկերագրությունը, որը հիմնականում արտահայտվում էր գաղտնանշանների կամ ալեգորիկ պատկերների տեսքով: Այդ շրջանի կատակոմբային արվես-

1 Միակ հայտնի օրինակն առաջին անգամ հրատարակվել է 1878 թ. (**F. W. Madden,** Christian Emblems on the Coins of Constantine I The Great, His Family, and His Successors, The numismatic chronicle and journal of the Royal numismatic society, London, 1878, p. 47, pl. V, 14). **Ph. Grierson**, Catalogue of Late Roman Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection, from Arcadius and Honorius to the Accession of Anastasius, Washington, 1992, էջ 158:

2 Տես **A. Bellinger,** Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection, Anastasius I to Maurice, vol. 1, Washington, 1965, ¿ç 2, Ã. 1. **D. R. Sear**, Byzantine Coins and Their Values, London, 1987, էջ 36, թ. 2:

տում Քրիստոսը պատկերվում էր գառան, խաղողի որթի, ձկան, խարսխի եւ այլ խորհրդանիշներով: Վերջիններս հավատացյալների ուշադրությունն ուղղորդում էին դեպի պատկերի հոգեւոր ընկալումը՝ լինելով գաղափարի տեսանելի նշանը: Քրիստոսի մարդակերպ պատկերներում շոշափելի էր անտիկ մշակույթի ազդեցությունը. Նա հանդես էր գալիս երիտասարդ հովվի, կայսեր, քարոզչի կամ փիլիսոփայի պատկերով՝ ժամանակի ոճական լուծումներով: Դեռեւս կատակոմբային արվեստում աստիճանաբար ձեւավորվում էին քրիստոնեական կանոնիկ պատկերագրության նախատիպերը: Քննարկվող խնդրի շրջանակներում հատկապես ուշագրավ են Հռոմի Ս. Մարցելինոսի եւ Ս. Պետրոսի, Ս. Պուդենցիայի կատակոմբների ներսում գահին բազմած Քրիստոսի պատկերները, որտեղ Նա լուսապսակով է, երկար մազերով եւ մորուքով, հագին կրում է *պուռնիկա* եւ *հիմատիոն*, աջ ձեռքով օրհնում է, ձախում՝ Ավետարանն է (նկ. 3): Այս պատկերը, հետագայում ենթարկվելով որոշ մշակման, դարձավ դրամների վրա հանդիպող հիմնական պատկերագրական կանոնիկ տիպի՝ Քրիստոս Ամենակալի կամ Պանտոկրատորի նախօրինակը: Ըստ որոշ հետազոտողների՝ գահին բազմած Պանտոկրատոր տիպը քրիստոնեական պատկերագրության մեջ նույնացումն էր գահին նստած Զեւսի հետ[3]:

Ո՞րն է Քրիստոսի պատկերման ճշմարիտ մոտեցումը. Նրան պետք է ներկայացնել խորհրդանիշների միջոցո՞վ, թե՞ մարդակերպ: Այս հարցը տարակարծությունների տեղիք է տալիս:

Քրիստոնեական պատկերագրության գեղարվեստական դրսեւորումները սերտորեն կապված էին դավանաբանական տարակարծությունների հետ: Քրիստոսին պատկերելու խնդիրը բազմիցս քննարկվել էր եկեղեցական հայրերի կողմից եւ երկար ժամանակ լուծում չէր գտել: Մինչ Հուստինիանոս Բ.-ի գահակալությունն արդեն գումարվել էր եկեղեցական վեց տիեզերաժողով: Հուստինիանոսի կառավարման առաջին շրջանում՝ 692 թ., գումարվում է Տրուլլոյի ժողովը, որտեղ Եկեղեցու կարգապահական եւ կազմակերպչական հարցերին վերաբերող որոշումներից զատ, ընդունվում է 82-րդ կանոնը, ըստ որի՝ ընդունելի էին համարվում քրիստոնեական պատկերները եւ **Քրիստոսին մարդակերպ**, այլ ոչ թե գառան պատկերով ներկայացնելը: Լ. Ուսպենսկին այդ նորամուծությունը համարում է բյուզանդական գեղարվեստական մտածողության մեջ պատկերագրական կանոնի սկիզբ[4]: Բյուզադական դրամների պատկերագրության մեջ բեկումնային պահերից է 82-րդ կանոնի գործնական կիրառումը: Հուստինիանոսը Քրիստոսին պատկերել է տալիս դրամի դիմերեսին՝ ցանկանալով

3 Տե՛ս **K. S. Latourette**, A History of Christianity, vol. 1, "Beginnings to 1500". Revised edition, San Francisco, 1975, էջ 572. **Ph. Grierson,** Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection, vol. III, part 1, Washington, 1973, էջ 164. **E. Kitzinger**, *Some Reflections on Portraiture in Byzantine Art*, Zbornik radova Vizantoloskog instituta, 8, *1963*, էջ *185-93:*

4 Տե՛ս **Л. А. Успенский,** Богословие иконы Православной Церкви, гл. V. "Пято-Шестой собор и его учение о церковном образе", Коломна, 1997:

1

2

3

4

5

6

7

8

9

10

11

12

13

14

15

արտահայտել իր բարեպաշտությունը, իսկ իրեն նեկայացնում է դարձերեսին կանգնած, ձեռքին խաչ եւ *ակակիա* բռնած: Դրամի շրջագծով՝ «Հուստինիանոս ծառա Աստծո» գրությունն առավել ընդգծում է այդ գաղափարը: Դարձերեսի տիպը որոշակիորեն աղերսվում է Հուստինիանոսի ժամանակակից, Օմայան խալիֆ Աբդ ալ-Մելիքի մինչռեֆորմյան դրամների պատկերագրության հետ, որտեղ խալիֆը նույպես պատկերված է կանգնած, շուրջը՝ »Աբդալլահ« (Աստծո ծառա) գրությամբ[5]:

Հուստինիանոս Բ.-ի կառավարման առաջին շրջանի դրամների վրա ներկայացված Քրիստոսի պատկերը ենթարկվում է արդեն ձեւավորված պատկերագրական կանոնի: Այն է՝ Քրիստոսի կիսանդրին դիմահայաց, երկար մազերով եւ մորուքով, գլխի եզերում խաչ, հագին *պունիկա* եւ *հիմատիոն*, աջ ձեռքով օրհնում է, ձախում՝ Ավետարանն է (նկ. 4): Դրամի շրջագծով «Հիսուս Քրիստոս թագավոր թագավորների» գրությունն է. այս ձեւակերպումը հիշատակվում է նաեւ Նոր Կտակարանում[6]: Պատկերագրական նույն տիպը նա կիրառում է նաեւ ոսկե սեմիսի, տրեմիսի եւ արծաթե հեքսագրամի համար: Ջ. Բրեքենրիջը կարծում է, որ Հուստինիանոսի դրամների վրայի Քրիստոսի պատկերը վերցված է Կոստանդնուպոլսի կայսերական Մեծ Պալատի «Ոսկե սրահ»-ի (Χρυσοτρίκλινος) խճանկարից, որի համար նախօրինակ է հանդիսացել Ֆիդիասի Զեւսը[7]:

Քրիստոսը՝ տարեց, երկար մորուքով եւ մազերով, որպես գթասիրտ, միեւնույն ժամանակ խիստ դատավորի տեսքով այս պատկերը սերտ աղերսներ ունի Սինայի Ս. Կատարինե վանքում պահվող Քրիստոս Ամենակալի հնագույն սրբապատկերի հետ[8] (նկ. 5): Հիմնական տարբերությունն այն է, որ դրամների վրա լուսապսակի փոխարեն՝ Քրիստոսի գլխի եզերում խաչ է պատկերված: Քրիստոսի պատկերը նման հորինվածքով է լուծված նաեւ Սան Վիտալեի բազիլիկայի Զ. դարի խճանկարում (նկ. 7), Զ.-Է. դարերով թվագրվող Լանկորոնսկիի գեմմայի վրա (նկ. 6), Կիեւի Ս. Սոֆիայի տաճարի ԺԱ. դարի խճանկարներից մեկում (նկ. 10) եւ այլն: Դրամների վրա եւ սրբապատկերներում Քրիստոսի պատկերն ստեղծող վարպետները, հետեւելով պատկերագրական միեւնույն կանոնին, գեղարվեստական ազդեցություն են թողել միմյանց վրա:

Քրիստոնյա տարբեր ժողովուրդներ սրբապատկերներում Քրիստոսին ներկայացնում են իրենց ազգային հատկանիշներին բնորոշ դիմանկարային գծերով: Նկարիչները, փորձելով ներկայացնել Քրիստոսի մարդկային եւ աստվածային

5 Տե՛ս **J. Walker,** A catalogue of the Arab-Byzantine and post-reform Umaiyad coins. A catalogue of the Muhammadan coins in the British Museum, London, 1956, ¿ç v-vi. G. Miles, The earliest Arab gold coinage, American Numismatic Society Museum Notes, vol. 13, 1967, էջ 227:

6 «Որ դու պահես պատուիրանը անբիծ, անարատ, մինչեւ յայտնութիւնը Յիսուս Քրիստոսի, որին իր ժամանակում յայտնի պիտի անի Երանելին եւ միակ Հզօրը, թագաւորների Թագաւորը եւ տէրերի Տէրը». Ա. Տիմոթեոս Զ. 14-15:

7 Տե՛ս **J. D. Breckenridge**, The Numismatic Iconography of Justinian II, Numismatic Notes and Monographs, թ. 144, New York, 1959, էջ 46:

8 Տե՛ս **M. Chatzidakis,** An Encaustic Icon of Christ at Sinai, The Art Bulletin, vol. 49, թ. 3, 1967, էջ 197-214:

բնությունները, սրբապատկերներում Նրան պատկերում էին զծային, ոչ ծավալային լուծումներով, ստեղծում էին հակադարձ տարածականության պատրանք, որտեղ Քրիստոսը ոչ թե նկարված է, այլ հայտնված՝ անձեռակերտ: Քրիստոսին պատկերելու հիմնական խնդիրը ոչ թե գեղարվեստական կատարելության ձգտումն էր եւ նատուրալիզմը, այլ Նրա աստվածային եւ մարդկային բնությունների բացահայտումը:

Հուստինիանոսի կառավարման երկրորդ շրջանի (705-711 թթ.) դրամների վրա Քրիստոսը ներկայացվել է այլ մեկնաբանությամբ (նկ. 13): Աստծո Որդին այստեղ, ի տարբերություն նախորդի, երիտասարդ է, գանգրահեր, թույլ արտահայտված մորուքով: Այս՝ առաջին հայացքից բոլորովին տարբեր մեկնաբանությամբ Քրիստոսը, որոշակի ընդհանրություններ ունի Հուստինիանոսի վաղ դրամների վրա պատկերվածի հետ: Դրանք են՝ գլխի եռեւի խաչի, հագուստի ծալքավորման, աջ ձեռքի եւ Սուրբ Գրքի միանգամայն նույն լուծումները: Այսինքն՝ այդ երկու տիպը տարբերվում է միայն գլխի պատկերմամբ: Երիտասարդ եւ անմորուս Քրիստոսի պատկերագրական տիպը, որը Ջ. Բրեքենրիջն անվանում է «սիրիական», հիմնականում բնորոշ էր մեր թվարկության առաջին երեք դարի վաղ քրիստոնեական պատկերագրությանը: Ջ. Բրեքենրիջը ենթադրում է, որ Քրիստոսի այս պատկերը Հուստինիանոսը վերցրել է Կամուլիանայի անձեռակերտ պատկերից, որը 574 թ. Սիրիայից բերվել էր Կոստանդնուպոլիս[9]: Այսինքն՝Հուստինիանոսի երկրորդ շրջանի գահակալության դրամներում փորձել են ներկայացնել Հիսուս Քրիստոսի իրական պատկերը՝ շեշտելով Նրա մարդկային բնույթը: Հիսուսին անմորուս, գանգրահեր երիտասարդի տեսքով սովորաբար պատկերում էին Նրա երկրային գործունեությունը ներկայացնող ավետարանական տեսարաններում[10]: Հուստինիանոսի երկրորդ շրջանի դրամների վրա Քրիստոսի եւ կայսեր պատկերները բավական մոտ գեղարվեստական լուծումներ ունեն, որտեղ նրանք երկուսն էլ երկրային են, մարմնածին՝ ի տարբերություն նախորդ տիպի, որում գերիշխողը Քրիստոսի վեհ, աստվածային էությունն է: Ա. Գրաբարը Հուստինիանոսի կառավարման երկու շրջանի Քրիստոսի պատկերով դրամները տարանջատում է հետեւյալ կերպ. առաջինը՝ որպես Փառապանծ թագավոր կամ երկրորդ գալստյան Քրիստոս, իսկ երկրորդը՝ գանգրահեր Քրիստոս, Աստծո մարմնացյալ Որդի կամ պատմական անձ[11]:

Հուստինիանոսից հետո Քրիստոսի պատկերով դրամների թողարկումը որոշ ժամանակ ընդհատվում է: Նրան անմիջապես հաջորդող կայսրերը չկրկնեցին Քրիստոսով տիպը՝ ցանկանալով խզել կապը Հերակլիոսի հարստության վերջին տիրակալի հետ, իսկ որոշ ժամանակ անց տարածվեց «պատկերամար-

9 Տե՛ս **J. D. Breckenridge,** The Numismatic Iconography of Justinian II, Numismatic Notes and Monographs, թ. 144, New York, 1959, էջ 59-62:

10 Տե՛ս **E. Syndicus,** Early Christian Art, Burns and Oates, London, 1962, էջ 21-23:

11 Տե՛ս **A. Grabar,** L'iconoclasme byzantin. Dossier archéologique, Revue de l'histoire des religions, vol. 154, 1958, էջ 227-230:

պությունը»[12]: Բյուզանդական մշակույթի եւ պատմության այս կարեւորագույն շրջանն ընթացել է երկու փուլով՝ 730-787 եւ 814-842 թթ., ընդհանուր առմամբ տեւել է ավելի քան 90 տարի: Այս շրջանում անխնա ոչնչացվում են բոլոր կրոնական պատկերները, որի հետեւանքով մեծ ճեղք է առաջանում բյուզանդական արվեստում: Սրբապատկերների՝ Բյուզանդական Ուղղափառ Եկեղեցուն բնորոշ առատությունը ենթարկվում է սուր քննադատության: Պատկերամարտների կարծիքով՝ պատկերներ ստեղծելով խախտվում էր երկրորդ պատվիրանը. «Վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրայ, եւ երկրի խորքի ջրերի մէջ եղած որեւէ բանի նմանութեամբ քեզ **կուռքեր չպիտի կերտես**: **Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես** դրանց, որովհետեւ Ես եմ քո Տէր Աստուածը՝ մի նախանձոտ Աստուած. հայրերի մեղքերի համար պատժում եմ որդիներին, ինձ ատող մարդկանց նոյնիսկ երրորդ ու չորրորդ սերնդին» (Ելից Ի. 4-5): Բյուզանդական կայսրությունում պատկերամարտության ի հայտ գալու պատճառներից էր նաեւ այս համոզմունքը, որը, անշուշտ, արտահայտվում էր նաեւ դրամների պատկերագրության մեջ: Եւ քանի որ Հիսուսին պատկերելը համարվում էր սրբապղծություն, Նրա պատկերը դրամների վրայից նույնպես անհետանում էր: Լեւոն Գ. (717-741), որն սկսում է պատկերամարտական հետապնդումները, ոսկե դրամների վրայից հանում է Քրիստոսի պատկերը եւ սկսում թողարկել նոր տիպի արծաթե միլիարեսներ՝ վերջիններիս դիմերեսին ներկայացնելով մեծադիր խաչ՝ «Հիսուս Քրիստոս հաղթող» գրությամբ:

Լեւոն Դ.-ի (775-780) մահից հետո՝ պատկերամարտության երկու փուլի միջեւ ընկած հատվածում, տարաձայնությունները ժամանակավորապես դադարում են: Նրա կինը՝ Իրենեն, որը պատկերապաշտության ջատագով էր, 787 թ. հրավիրում է Նիկեայի Բ. տիեզերական ժողովը, որտեղ որոշվում է վերականգնել պատկերապաշտությունը: Այս քայլը հիմավորվում է Հովհաննեսի Ավետարանի հետեւյալ հատվածով. «Եւ Բանը մարմին եղաւ ու բնակուեց մեր մէջ, եւ տեսանք նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միածնին՝ լի շնորհով ու ճշմարտութեամբ» (Յայտն. Ա. 14): Աստծո Որդին մարդեղացել է, ուստի Նրան կարելի է պատկերել:

Ժողովից հետո, սակայն, դրամների վրա Քրիստոսի պատկերը չի վերականգնվում: Պատկերամարտության դեմ վերջնական հաղթանակը պսակվում է Թեոդորա կայսրուհու շնորհիվ: 842 թ. վերականգնելով պատկերապաշտությունը՝ Թեոդորայի որդի Միքայել Գ.-ն դրամների վրա նորից սկսում է պատկերել Քրիստոսին՝ հետեւելով Հուստինիանոս Բ.-ի գահակալման առաջին շրջանի՝ երկար մազերով ու մորուքով, տարեց Քրիստոսի պատկերագրական տիպին: Միքայելի գահակալությունից սկսած մինչեւ կայսրության անկումը՝ Քրիստոսի պատկերը հիմնական տեղ է զբաղեցնում բյուզանդական դրամների վրա:

12 Տե՛ս **F. Füeg,** Corpus of the Nomismata from Anastasius II to John I in Constantinopole 713-976, London, 2007, էջ 131:

Քրիստոսի պատկերագրության մեջ առանցքային է Պանտոկրատորի տիպը, որը ձեւավորվում է քրիստոնեության վաղ շրջանում եւ հարատեւում մինչեւ կայսրության անկումը[13]: Պանտոկրատոր (հունարեն πᾶν-բոլոր եւ κράτος-տիրակալ)՝ Ամենակալ Քրիստոսը հիշատակվում է Հայտնության գրքում. «Ես եմ Ալֆան եւ ես եմ Օմեգան, - ասում է Տէր Աստուածը, - նա, որ է, որ էր եւ որ գալու է. **Ամենակալը**» (Ա. 8), նաեւ՝ Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթում. «Արդարեւ, կենդանի Աստծու տաճար էք դուք, ինչպէս ասաց Աստուած, ասում է **Ամենակալ** Տէրը» (Զ. 18):

Աստծո Միածին Որդին Աստվածաշնչում հետեւյալ կերպ է հիշատակվում. «...բոլորի վրա իշխող օրհնյալ Աստված» (Հռոմ. Թ. 5), «...սկիզբը եւ վախճանը, ալֆան ու օմեգան» (Յայտն. Ա. 8), «...ամենայն պետության եւ իշխանության գլուխը» (Պող. Բ. 10), «...տերերի Տերը եւ թագավորների Թագավորը» (Յայտն. ԺԷ. 14), «...մեռյալներին ու կենդանիներին հավասարապես տիրող» (Հռոմ. ԺԴ. 9), «Դատավոր» (Գործք ԺԷ. 31): Կերպարի այս բնորոշումներն են ընկած Ամենակալի պատկերագրական տիպի հիմքում: Պատահական չէ, որ Պանտոկրատոր Քրիստոսը կենտրոնական տեղ է զբաղեցնում Արեւելյան Ուղղափառ Եկեղեցու պատկերագրական համակարգում, եւ հենց այս տիպն է լայն տարածում գտնում նաեւ դրամաթողարկման մեջ: Կայսրերը խորապես գիտակցում էին Եկեղեցու կարեւորությունը կենտրոնաձիգ պետություն ունենալու հարցում, այդ պատճառով փորձում էին համերաշխություն ապահովել դավանաբանական վեճերում: Քրիստոս Ամենակալն ընկալվում էր որպես բացարձակ իշխանության խորհրդանիշ, այսինքն՝ ամենակարող, ամենազոր տիրակալ: Այս տեսանկյունից՝ Ամենակալի կերպարում իր արտացոլումն էր գտնում նաեւ կայսր-ավտոկրատորի՝ երկրի վրա նրա բացարձակ իշխանության խորհուրդը:

Դրամները, որոնք կրոնական քարոզչության զանգվածային միջոցներից էին, պետք է հետեւեին պատկերագրական կանոնին: Կրոնական կանոնիկ պատկերի արմատական սկզբունքը պահանջում է, որ ճիշտ լինի աստվածաբանական մեկնության տեսանկյունից: Այսինքն՝ հետեւելով Ուղղափառ Եկեղեցու հիմնական դիրքորոշմանը՝ Քրիստոսի պատկերում պետք է արտացոլված լինեն Նրա մարդկային եւ աստվածային բնությունները:

Քրիստոսը ներկայացվում էր գերազանցապես դրամների դիմերեսին, զանազան հորինվածքային լուծումներով՝ կիսանդրի, երեք քառորդ կամ ամբողջ հասակով կանգնած, գահին բազմած, կայսերը օրհնելիս, փառապսակի մեջ, Աստվածածնի գրկում՝ մեդալիոնի մեջ: Այս բոլոր տիպերում նա լուսապսակով է

13 Տես **Н. П. Кондаков**, История византийского искусства и иконографии по миниатюрам греческих рукописей, Одесса, 1876. **И. А. Припачкин**, Иконография Господа Иисуса Христа, Москва, 2001. **H. Hommel**, Pantokrator, Theologia Viatonan 5, Berlin, 1953-1954, էջ 322-378. **E. M. Catich**, The Image of Christ in Art, The Furrow, vol. 8, թ. 6, 1957, էջ 373-387. **C. Capuzzi**, Pantocrator. *Saggio d'esegesi* letterario-iconografica, Rome, 1964. **R. Cormack**, Rediscovering the Christ Pantocrator At Daphni, Journal of the Warburg and Courtauld institutes, LXXI, 2008, էջ 55-74:

16

17

18

19

20

21

22

23

24

25

26

27

28

29

30

31

32

33

34

կամ գլխի հետեւում խաչ, հագին ունի *կունիկա* եւ *հիմատիոն*, ձախ ձեռքում՝ Սուրբ Գիրք կամ գալարափաթեթ, աջով օրհնում է:

Քրիստոսի պատկերի կանոնականությունը նկատելի է նույնիսկ աննշան թվացող մանրամասներում: Այսպես՝ Քրիստոսը բոլոր պատկերներում, բացի Հուստինիանոսի երկրորդ շրջանի դրամներից եւ Էմմանուել տիպից, ունի երկար, մեջտեղից բացված մազեր, որոնք ձախ հատվածում ավելի առատ են եւ իջնում են մինչեւ ուսը, երբեմն՝ ճակատին առանձնացված փոքրիկ փնջով: Քրիստոսի մազերը նման կերպ են պատկերված նաեւ որմնանկարներում, խճանկարներում, մանրանկարներում, սրբապատկերներում եւ այլուր: Աստծո Որդին որոշ տարբերակներում պատկերված է անմորուս (Մանուել Ա.-ի տիպ, նկ. 35), թեթեւ ընդգծված (Հուստինիանոս Բ.-ի երկրորդ շրջան, նկ. 13), կարճ (Կոստանդին Է.-ի տիպ, նկ. 16) կամ փարթամ (Հուստինիանոս Բ.-ի կառավարման առաջին շրջան, նկ. 4) մորուքով: Հուստինիանոս Բ., Ռոմանոս Դ. եւ Միքայել Է. կայսրերի թողարկած դրամների վրա Քրիստոսի գլխի հետեւում պատկերված է խաչ: Մյուս բոլոր դեպքերում Քրիստոսը լուսապսակով է, որը ներսում ունի խաչաձեւ լուծում: Խաչի թեւերը հաճախ զարդարված են բազմատեսակ նախշերով (հատկապես՝ Վասիլ Բ.-ի դրամների եւ անանուն Ա դասի ֆոլիսների վրա), որը հատուկ է միայն Քրիստոսի պատկերներին:

Քրիստոսի աջ ձեռքը պատկերվել է մատների որոշակի դասավորությամբ, որը քրիստոնեական պատկերագրության մեջ ունի օրհնության, վարդապետության իմաստ: Ձեռքը պատկերվել է մի քանի դիրքով՝ ուսի բարձրությամբ (Կոստանդին Է., նկ. 16), կրծքի դիմաց (Հուստինիանոս Բ., նկ. 4), լայն պարզած (Վասիլ Ա., նկ. 24), իսկ երբեմն էլ չի երեւում: Առանձնանում է Ռոմանոս Բ.-ի (959-963) սոլիդի վրայի Քիրստոսի աջ ձեռքը (նկ. 19), որը պատկերված է կրծքի դիմաց, հորիզոնական դիրքով, դեպի ներս շրջված: Աջ ձեռքը նույն կերպ է պատկերված նաեւ Կիեւի Ս. Սոֆիայի տաճարի (ԺԱ. դ., նկ. 15), Հոսիոս Լուկասի վանքի (ԺԱ. դ., նկ. 21), Բեռլինի Բոդե թանգարանում պահվող խճանկարներում (ԺԲ. դ., նկ. 20) եւ այլն: Դրամների լավ պահպանված օրինակներում պարզ երեւում է մատների դասավորությունը: Մատներից երեքը բաց են, երկուսը՝ փակված: Բաց մատները ներկայացնում են Ս. Երրորդությունը (Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի), իսկ մյուս երկուսը՝ Քրիստոսին որպես մարդ եւ Աստված[14]: Մեկ այլ մեկնաբանությամբ՝ մատների նման դասավորությամբ գրված է Քրիստոսի անվան հապավումը՝ IC XC. ցուցամատը ներկայացնում է I գրառը, թեքված միջնամատը՝ C, բթամատն ու մատնեմատը՝ X, ճկույթը՝ C: Սա դրսեւորվում է որպես օրհնության նշան (նկ. 53)[15]:

Քրիստոսի ձախ ձեռքում միշտ պատկերված է զարդարուն կազմով Սուրբ

14 Տես A. Andreopoulos, The Sign of the Cross: The Gesture, the Mystery, The History, Brewster, 2006, էջ 11-42:

15 Տես **И. А. Припачкин**, Иконография Господа Иисуса Христа, Москва, 2001, էջ 6:

Գիրքը կամ գալարափաթեթ: Որմնանկարներում, խճանկարներում, սրբապատկերներում եւ մանրանկարներում գիրքը ներկայացված է նաեւ բաց տարբերակով, որը դրամներում չկա: Հետեւելով Քրիստոսի կերպարի զարգացման հաջորդական ընթացքին՝ նկատում ենք, որ որոշ տարբերակներում ձախ ձեռքը գրքի վրա է, մյուսներում՝ թիկնոցի տակ կամ ընդհանրապես չի երեւում, իսկ գահին նստած պատկերներում դրված է ձախ ոտքին, երբեմն ձախ կողմից կամ վերեւից նշմարվում են մատները:

Քրիստոսը պատկերվել է իր ժամանակին հատուկ հագուստով. տակից՝ *տունիկա*, վրայից՝ *հիմատիոն*: Տունիկայի աջ հատվածում երբեմն երեւում է *կլավը*՝հագուստին ամրացվող ոսկեգույն կամ ծիրանագույն գործվածքային երիզը, որը, որպես տարբերակիչ նշան, ընդգծում էր Քրիստոսի դիրքը: Դրամներում կլավը պատկերվել է Քրիստոսի աջ ուսից իջնող զույգ գծերի տեսքով, իսկ որմնանկարներում եւ մանրանկարներում, որտեղ հնարավորություն կար այն գունավոր պատկերելու, ընդգծվել է ոսկեգույնով: Սա նույնպես անտիկ ավանդույթի վերապրուկ էր, որը կանոնիկ բնույթ էր ստացել քրիստոնեական շրջանում:

Բյուզանդական դրամների վրա նույն պատկերագրական տիպը հանդես է գալիս զանազան տարբերակներով, որոնցից յուրաքանչյուրը կարող է հանդիպել մեկ, մի քանի կամ մի շարք թողարկումներում: Ստորեւ ներկայացնում ենք տիպերը, ապա՝ տարբերակները՝ դրանք պայմանականորեն անվանելով այն կայսեր անունով, որի դրամների վրա առաջին անգամ հայտնվել է տվյալ տիպը կամ տարբերակը:

Քրիստոս Պանտոկրատորի կիսանդրին. Քրիստոսի գլխի հետեւում խաչ, երկար մազերով եւ առատ մորուքով, աջ ձեռքը կրծքի դիմաց՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Հուստինիանոս Բ.-ի առաջին տարբերակ (գահակալման առաջին շրջան՝ 685-695 թթ., նկ. 4), որը հանդիպում է նաեւ Միքայել Գ., Ալեքսանդր (*Քրիստոսը կարճ մորուքով*), Կոստանդին Է., Միքայել Դ. (նկ. 8) (*Քրիստոսը լուսապսակով, երկար մորուքով*), Թեոդորա, Կոստանդին Ժ., Միքայել Է., Միքայել Է. (*Քրիստոսի գլխի հետեւում խաչ, կարճ մորուքով*), իսկ **սխեմատիկ տիպը**՝ Նիկեֆորոս Բրիենիոս, Ալեքսիոս Ա. (նկ. 11), Հովհաննես Բ., անանուն ֆոլիս դաս L, N, Հովհաննես Կոմնենոս-Դուկաս, Անդրոնիկոս Բ. եւ Միքայել Թ., Հովհաննես Ե., Անդրոնիկոս Դ., Հովհաննես Է., Մանուել Բ., Հովհաննես Ը. (նկ. 12), Կոստանդին ԺԱ. կայսրերի դրամների վրա:

Քրիստոսի գլխի հետեւում խաչ, գանգուր մազերով եւ կարճ մորուքով, աջ ձեռքը կրծքի դիմաց՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Հուստինիանոս Բ.-ի երկրորդ տարբերակը (գահակալման երկրորդ շրջան՝ 705-711 թթ., նկ. 13) հանդիպում է միայն Հուստինիանոսի դրամների վրա:

Քրիստոսը լուսապսակով, աջ ձեռքը բարձրացրած՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Կոստանդին Է.-ի (913-959) տարբերակ (նկ. 16), նաեւ՝ Ռոմանոս Բ. (նկ. 19) (*Քրիստոսի աջ ձեռքը հորիզոնական դիրքով դեպի*

ձախ՝ օրհնության ժեստով), Նիկեֆորոս Բ. (Կոստանդին Է.-ի փարբերակ), Հովհաննես Ա., Վասիլ Բ. (նկ. 17), Կոստանդին Ը., անանուն ֆոլիս դաս A, B, E, G *(Քրիստոսի ձախ ձեռքում գալարափաթեթ)*, H *(Քրիստոսի ձախ ձեռքում Ավետարանը)*, I, J *(Քրիստոսի գլխի հետևում խաչ)*, K *(Քրիստոսը լուսապսակով)*, Կոստանդին Թ., Միքայել Զ., Իսահակ Ա., Ռոմանոս Դ. *(Քրիստոսի գլխի հետևում կետավոր խաչ)*, Ռոմանոս Դ. *(Քրիստոսը լուսապսակով)*, Միքայել Է., Նիկեֆորոս Գ., Ալեքսիոս Ա. *(Քրիստոսի գլխի հետևում խաչ)*, Հովհաննես Բ. *(Քրիստոսը լուսապսակով)*, Կիպրոսի Իսահակ Կոմնենոս, Թեոդորոս Բ.:

Քրիստոս Էմմանուելի կիսանդրին. Քրիստոսը անմորուս, գանգուր մազերով, լուսապսակով, աջ ձեռքը կրծքի դիմաց՝ օրհնության ժեստով, ձախում՝ գալարափաթեթ - Մանուել Ա.-ի (1143-1180) փարբերակ (նկ. 22), նաև՝ Կիպրոսի Իսահակ Կոմնենոս, Ալեքսիոս Գ., Լատինական իշխանություն, Թեոդորոս Ա., Հովհաննես Գ., Թեոդորոս Բ., Թեոդորոս Կոմնենոս-Դուկաս, Մանուել Կոմնենոս-Դուկաս, Հովհաննես Կոմնենոս-Դուկաս, Միքայել Ա. Անգելոս, Մանուել Կոմնենոս, Միքայել Բ. Անգելոս, Միքայել Ը.:

Քրիստոս Պանտոկրատորը գահին բազմած. Գահը քնարաձև թիկնակով, Քրիստոսն աջ ձեռքը մեկնած դեպի աջ՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը[16] - Վասիլ Ա.-ի (867-886) փարբերակ (նկ. 24), նաև՝ Ալեքսանդր (գահի թիկնակը ելուստավոր), Կոստանդին Է. (Վասիլ Ա.-ի փարբերակ):

Գահը քնարաձև լայն թիկնակով, Քրիստոսն աջ ձեռքը բարձրացրած՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Լևոն Զ.-ի (886-912) փարբերակ (նկ. 25), նաև՝ Կոստանդին Է. (նկ. 26), Կոստանդին Թ., Կոստանդին Ժ., Ալեքսիոս Ա.:

Գահն ուղղանկյուն թիկնակով, Քրիստոսն աջ ձեռքը բարձրացրած՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Ռոմանոս Գ.-ի (1028-1034) փարբերակ (նկ. 28), նաև՝ անանուն ֆոլիս D դաս, Կոստանդին Թ., Կոստանդին Ժ., Եւդոկիա (նկ. 29) *(Քրիստոսի աջ ձեռքը կրծքի դիմաց)*, Միքայել Է. *(Քրիստոսը աջ ձեռքը բարձրացրած՝ օրհնության ժեստով)*, Նիկեֆորոս Գ., Ալեքսիոս Ա. *(Քրիստոսի աջ ձեռքը կրծքի դիմաց)*, անանուն ֆոլիս M դաս *(Քրիստոսը աջ ձեռքը բարձրացրած՝ օրհնության ժեստով)*, Հովհաննես Բ., Մանուել Ա., Թեոդորոս Ա., Հովհաննես Գ., Թեոդորոս Բ., Անդրոնիկոս Բ. եւ Միքայել Թ., Անդրոնիկոս Գ., Հովհաննես Ե., Հովհաննես Զ., Անդրոնիկոս Դ.:

Գահն առանց թիկնակի, Քրիստոսն աջ ձեռքը մեկնած դեպի աջ՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Միքայել Ե.-ի (1041-1042) փարբերակ (նկ. 31), նաև՝ անանուն ֆոլիս F դաս, Իսահակ Ա., Միքայել Է., Նիկեֆորոս Գ., Ալեքսիոս Ա., Հովհաննես Բ., Մանուել Ա., Ալեքսիոս Գ., Հովհաննես Գ., Թեոդորոս Ա., Թեոդորոս Բ., Թեոդորոս Կոմնենոս-Դուկաս, Միքայել Ը., Անդրոնիկոս Բ. եւ Միքայել Թ.:

16 Տես **J. D. Breckenridge**, Christ on the Lyre-Backed Throne, Dumbarton Oaks Papers, vol. 34/35 (1980/1981), էջ 247-260:

Գահին առանց թիկնակի, Քրիստոսն աջ ձեռքը բարձրացրած՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Ալեքսիոս Ա.-ի (1081-1118) դարբերակ (նկ. 33), նաեւ՝ Մանուել Ա., Լատինական իշխանություն, Թեոդորոս Ա., Թեոդորոս Կոմնենոս-Դուկաս, Անդրոնիկոս Բ., Անդրոնիկոս Բ. եւ Միքայել Թ., Միքայել Գ. Անգելոս:

Քրիստոս Էմմանուելը՝ ուղղանկյուն թիկնակով գահին բազմած. Քրիստոսը լուսապսակով, աջ ձեռքը մեկնած դեպի աջ՝ օրհնության ժեստով, ձախում՝ գալարափաթեթ - Իսահակ Կոմնենոսի (1184-1191) տիպ, Կիպրոս (նկ. 35). հանդիպում է միայն Իսահակի դրամների վրա:

Քրիստոսը կանգնած. Քրիստոսը լուսապսակով, աջ ձեռքը բարձրացրել է՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - Թեոդորայի (1055-1056) տիպ (նկ. 37), նաեւ՝ Կոստանդին Ժ., Ալեքսիոս Ա. (նկ. 39), Հովհաննես Բ., Մանուել Ա., Ալեքսիոս Գ., Լատինական իշխանություն, Թեոդորոս Ա., Հովհաննես Գ., Թեոդորոս Բ., Միքայել Ը., Անդրոնիկոս Բ., Անդրոնիկոս Գ., Հովհաննես Զ.:

Քրիստոսը՝ երեք քառորդ. Քրիստոսը լուսապսակով, աջ ձեռքը բարձրացրել է՝ օրհնության ժեստով, ձախում՝ Ավետարանը - անանուն ֆոլիսների C դասի (1034-1041) տիպ (նկ. 40), նաեւ՝ Զոե, Նիկեֆորոս Գ.:

Քրիստոսն օծում է. Քրիստոսը դրամի աջ դաշտում կանգնած, գլխի հեփեւում խաչ, աջ ձեռքով օծում է կայսերը, ձախում՝ Ավետարանը - Ռոմանոս Ա.-ի (920-944) դարբերակ (նկ. 42), նաեւ՝ Ալեքսիոս Ա. *(Քրիստոսը լուսապսակով, օծում է Հովհաննես Բ.-ին)*, Անդրոնիկոս Ա. (նկ. 43), Լատինական իշխանություն, Հովհաննես Գ., Թեոդորոս Ա., Թեոդորոս Կոմնենոս-Դուկաս, Մանուել Կոմնենոս-Դուկաս, Միքայել Ը., Անդրոնիկոս Բ., Հովհաննես Ե., Միքայել Գ. Անգելոս:

Քրիստոսը դրամի կենտրոնում՝ ամբիոնի վրա կանգնած, լուսապսակով, երկու ձեռքով օծում է - Ռոմանոս Դ.-ի եւ Եւդոկիայի (1068-71) տիպ (նկ. 45), նաեւ՝ Անդրոնիկոս Բ. եւ Միքայել Ը., Անդրոնիկոս Բ., Միքայել Թ., Անդրոնիկոս Բ., Անդրոնիկոս Գ., Հովհաննես Ե. եւ Հովհաննես Զ.:

Քրիստոսն աջից, ձախ ձեռքում Ավետարանը կամ գալարափաթեթ, աջով օծում է ծնկաչոք կայսերը, Միքայել հրեշտակապետը գլխավերեւում - Միքայել Ը.-ի (1261-1282) տիպ (նկ. 47), նաեւ՝ Անդրոնիկոս Բ.:

Քրիստոսն աջից, ձախ ձեռքում Ավետարանը, աջով օծում է ծնկաչոք կայսերը -Անդրոնիկոս Բ.-ի (1282-1328) տիպ (նկ. 48), նաեւ՝ Անդրոնիկոս Գ., Հովհաննես Ե.:

Քրիստոսը կայսեր գլխավերեւում, երկու պարզած ձեռքերով օծում է նրան -Անդրոնիկոս Գ.-ի (1328-1341) տիպ (նկ. 50), նաեւ՝ Հովհաննես Զ.:

Քրիստոսը փառապսակի մեջ - Հովհաննես Զ.-ի (1353-1354) տիպ (նկ. 51), նաեւ՝ Մանուել Բ., Հովհաննես Ը.:

Գահին բազմած Քրիստոսի պատկերը, ինչպես վերը նշվեց, ի հայտ է եկել

35

36

37

38

39

40

41

42

43

44

45

46

47

48

49

50

51

52

53

դեռեւս Դ. դարում՝ կապակոմբային արվեստում: Դրամների վրա, սակայն, առաջին անգամ այն հայտնվում է Վասիլ Ա.-ի (867-886) օրոք (նկ. 24): Պատկերագրական այս տիպը Քրիստոսին ներկայացնում էր որպես բոլորի թագավոր: Վասիլ Ա.-ից հետո, գահին բազմած Քիրստոսի պատկերը շարունակում են կիրառել նրա հաջորդները՝ մինչեւ Կոստանդին Է. կայսրը, որը նախընտրում է կրկին շրջանառության մեջ դնել Քրիստոսի կիսանդրին (նկ. 16): 1028 թվականից հետո Քրիստոսի կիսանդրին եւ գահին նստած պատկերագրական հորինվածքները հավասարապես ընդունելի են դառնում հաջորդ կայսրերի համար: Քրիստոսը գահին նստած տիպում առանձնանում են մի քանի տարբերակներ՝ ըստ գահավորակի ձեւի՝ առանց թիկնակի, քնարաձեւ կամ ուղիղ թիկնակով: Բոլորն էլ ունեն իրենց զուգահեռները որմնանկարներում եւ խճանկարներում:

Երեք քառորդ կամ ամբողջ հասակով կանգնած Քրիստոսի պատկերները շատ չեն: Ինչպես նշում է Գրիերսոնը, պատճառը, ըստ երեւույթին, դրամի սահմանափակ տարածքն է[17]: Այս տիպն առաջին անգամ հանդիպում է Կոստանդին Է.-ի թողարկած դրամներում, որտեղ Քրիստոսն աջ ձեռքով օծում է Ռոմանոս Բ.-ին (նկ. 42):

Լեւոն Զ. (886-912) կայսրը, ընդլայնելով կրոնական թեման դրամների պատկերագրության մեջ, Հիսուսից բացի սկսում է պատկերել նաեւ Աստվածածնին:

Սկզբում միայն Քրիստոսի՝ ոսկե դրամների համար նախատեսված պատկերը, Հովհաննես Չմշկիկից սկսած, հայտնվում է նաեւ պղնձե դրամների վրա: Այս քայլը կարեւոր շրջադարձ էր բյուզանդական դրամաթողարկման մեջ: Վասիլ Բ.ի օրոք, արծաթի ճգնաժամի պայմաններում, որոշակի փոփոխություններ են տեղի ունենում ոսկե եւ պղնձե դրամների հարաբերակցության մեջ. բյուզանդական կայսրերը ոչ թանկարժեք մետաղից հատված անանուն ֆոլիսներին փորձում են տալ ավելի բարձր անվանական արժեք: Այդ նպատակով պղնձե դրամների վրա նախ պատկերվում է Քրիստոսը, որը միայն ոսկե դրամների պատկերագրությանն էր հատուկ, ապա մի քանի անգամ բարձրացվում է ֆոլիսի կշիռը:

Քրիստոսի »Էմմանուել« պատկերագրական տիպը, որտեղ Նա մանկահասակ է, անմորուս եւ զանգրահեր, դրամների վրա ի հայտ է գալիս ԺԲ. դարի կեսին՝ Մանուել Ա. կայսեր օրոք (նկ. 22): Սակայն մինչ այդ, անանուն ֆոլիսների Ա դասի դիմերեսին «Ամենակալ» պատկերագրական տիպն ուղեկցվում էր «Էմմանուել» գրությամբ, որը նշանակում է «Աստված մեզ հետ է»[18]: Քրիստոս Էմմանուելի պատկերագրական տիպը ձեւավորվել է ի պատասխան նեստորականության, որը մերժում էր Փրկչի աստվածային էությունը մինչ մկրտությունը: Այդ ըմբռնումը հերքելու համար՝ Էմմանուելը ներկայացվում էր մանկահասակ,

17 Տես **Ph. Grierson,** Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection, vol. III, part 1, Washington, 1973, էջ146:

18 «Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած»(Եսայի Է. 14):

կանգնած, գահին բազմած կամ մինչեւ կրծքավանդակը, լուսապակով, *կոնիկա* եւ *հիմապիոն* հագած, աջ ձեռքով օրհնելով, ձախում՝ գալարափաթեթ կամ Ավետարան բռնած: Այսինքն՝ կիրառվում էին երկրի վրա երկնային թագավորին՝ Քրիստոս Պանտոկրատորին բնորոշ պատկերագրական նույն մոդելները եւ ատրիբուտները:

ԺԳ.-ԺԵ. դարերում՝ Բյուզանդական կայսրության մայրամուտին, ավանդական պատկերագրական կանոնից որոշակի շեղումներ են նկատվում: Այս շրջանում թողարկված դրամների վրա հանդիպում ենք Քրիստոսի պատկերման բազմազան տիպերի ու տարբերակների: Կիսանդրիի եւ գահին բազմած տիպերից բացի, Քրիստոսին կարելի է տեսնել նաեւ ծնկաչոք կայսեր առջեւ կանգնած (Անդրոնիկոս Բ., նկ. 48), կայսեր գլխավերեւում՝ նրան օծելիս (Անդրոնիկոս Բ.): Այս շրջանում է, որ Քրիստոսի աջ եւ ձախ կողմում հայտնվում է շուշանածաղիկը (Անդրոնիկոս Գ., նկ. 50), որը հատուկ էր արեւմտաքրիստոնեական պատկերագրությանը: Կան բազմաֆիգուր հորինվածքներ, որտեղ Քրիստոսը պատկերվում է Միքայել հրեշտակապետի եւ կայսեր հետ միասին (նկ. 47): Քրիստոսին պատկերում էին նաեւ փառապակի՝ մանդորլայի մեջ (նկ. 51), որը խորհրդանշում էր Նրա համբարձումն ավետման տեսարանում[19]: Վերջինիս խորհրդաբանական իմաստը Քրիստոսին որպես Եկեղեցու Գլուխ պատկերելն էր:

Բյուզանդիայի պատմության ողջ ընթացքում կրոնական թեման արդիական է եղել հանրության լայն զանգվածների հետ առնչվող այնպիսի մի ասպարեզում, ինչպիսին դրամաթողարկումն էր: Բյուզանդական կայսրերն առանցքային դեր են հատկացրել Հիսուս Քրիստոսի կերպարին, Նրա միջոցով արտահայտվող կրոնական եւ քաղաքական խորհրդաբանությանը: Կայսրության վաղ շրջանում այն արտահայտվել է խորհրդանշանների լեզվով, այնուհետեւ դրանց ավելացել է նաեւ Քրիստոսի մարդակերպ պատկերագրությունը՝ բազմազան դրսեւորումներով: Այդ առումով, դրամները, պատկերային եւ գրավոր այլ աղբյուրների հետ միասին, քրիստոնեական պատկերագրության, մշակույթի եւ պատմության ուսումնասիրության կարեւոր եւ հստակ թվագրությամբ օժտված վկայություններից են:

19 Տե՛ս **Ю. Г. Бобров**, Малая История Культуры, Основы Иконографии Древнерусской Живописи, Санкт Петербург, 1995, էջ 68:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մարկիանոս, 450-457 թթ., սոլիդ, Հանթերիան թանգարան, www.huntsearch.gla.ac.uk:

2. Ամուսնական ոսկե մատանի, Է. դ., Լուվր, https://commons.wikimedia.org:

3. Ս. Պուդենցիայի կապակոմբ, խճանկար, Ե. դ., Հռոմ, http://antik-mosaik.livejournal.com:

4. Հուստինիանոս Բ., գահակալման առաջին շրջան, 685-695 թթ., սոլիդ, Sincona AG, Auction 3 (25.10.2011), lot 3371, www.acsearch.info:

5. Ս. Կատարինե վանք, սրբանկար, Զ. դ., Սինայ. տե՛ս **M. Chatzidakis**, An encaustic icon of Christ at Sinai, *The Art Bulletin*, vol. 49, No. 3, 1967, նկ. 1:

6. Լանկորոնսկիի գեմմա (հատված), սարդոնիքս, Զ.-Է. դդ., Կրակով, www.wawel.krakow.pl:

7. Սան Վիտալեի բազիլիկա, խճանկար, Զ. դ., Ռավեննա, www.fotopedia.com:

8. Միքայել Դ., 1034-1041 թթ., սոլիդ, Gorny & Mosch Giessener Münzhandlung, Auction 203 (05.03.2012), lot 619, www.acsearch.info:

9. Հոսիոս Լուկասի վանք, խճանկար, ԺԱ. դ., Հունաստան, www.greatmirror.com:

10. Ս. Սոֆիայի տաճար, խճանկար, 1043-1046 թթ., Կիև, http://vk.com:

11. Ալեքսիոս Ա., 1081-1118 թթ., տետարտերոն, www.wildwindslimited.com:

12. Հովհաննես Ը., 1425-1448 թթ., սպավրատոն, www.wildwinds.com:

13. Հուստինիանոս Բ., գահակալման երկրորդ շրջան, 705-711 թթ., սոլիդ, Ira & Larry Goldberg Coins & Collectibles, Inc., Auction 72 (03.02.2013), lot 4251, www.acsearch.info:

14. Հինթոնի Ս. Մարիամ խճանկար, Դ. դ., Բրիտանական թանգարան, www.britishmuseum.org:

15. Ս. Սոֆիայի տաճար, խճանկար, 1043-1046 թթ., Կիև, http://vk.com:

16. Կոստանդին Է., 913-959 թթ., սոլիդ, Gemini, LLC, Auction I (11.01.2005), lot 510, www.acsearch.info£

17. Վասիլ Բ., 976-1025 թթ., հիստամենոն նոմիսմա, Sincona AG, Auction 3 (25.10.2011), lot 3523, www.acsearch.info:

18. Դաֆնիի վանք, խճանկար, ԺԱ. դ., Հունաստան, www.allposters.com:

19. Ռոմանոս Բ., 959-963 թթ., սոլիդ, www.doaks.org:

20. Խճանկար, 1100-1150 թթ., Բոդե թանգարան, Բեռլին, http://commons.wikimedia.org:

21. Հոսիոս Լուկասի վանք, խճանկար, ԺԱ. դ., Հունաստան, http://commons.wikimedia.org:

22. Մանուել Ա., 1143-1180 թթ., հիպերպիրոն, Monnaies d'Antan, Auction 13 (16.05.2013), lot 231, www.acsearch.info:

23. Կամեյոն, ճարպաքար (սպեապիպ), Քրիստոս Էմանուել, ԺԳ.-ԺԴ. դդ., Մետրոպոլիտեն թանգարան, www.metmuseum.org:

24. Վասիլ Ա., 867-886 թթ., սոլիդ, MPO Auctions, Auction 38 (15.05.2013), lot 429, www.acsearch.info:

25. Լեւոն Զ., 886-912 թթ., սոլիդ, Stack's, The Golden Horn Collection (12.01.2009), lot 3219, www.acsearch.info:

26. Կոստանդին Է., 913-959 թթ., սոլիդ, Stack's, The Golden Horn Collection (12.01.2009), lot 3234, www.acsearch.info:

27. Ս. Սոֆիայի տաճար, խճանկար, Թ.-Ժ. դդ., Կոստանդնուպոլիս, www.doaks.org:

28. Ռոմանոս Գ., 1028-1034 թթ., հիստամենոն նոմիսմա, St. James Auctions Ltd, Auction 23 (04.02.2013), lot 83, www.acsearch.info:

29. Եւդոկիա, 1067 թ., հիստամենոն նոմիսմա, www.wildwinds.com:

30. Սուրբ խաչով մասնատուի, 960 թ., Լիմբուրգ, www.flickriver.com:

31. Միքայել Ե., 1041-1042 թթ., հիստամենոն նոմիսմա, www.wildwinds.com:

32. Ս. Մարկոսի բազիլիկա, խորան "Pala d'oro", 976 թ., վերանորոգվել է 1345 թ., Վենետիկ, www.flickr.com:

33. Ալեքսիոս Ա., 1081-1118 թթ., տետարտերոն, Numismatik Lanz München, Auction 155 (10.12.2012), lot 756, www.acsearch.info

34. Սանտա Մարիա Ասունտայի բազիլիկա, խճանկար, ԺԱ. դ., Տորչելո, www.wga.hu:

35. Իսահակ Կոմնենոս, 1187-1191 թթ., Կիպրոս, տետարտերոն, www.wildwinds.com:

36. Սան Լորենցո Մաջորեի բազիլիկա, խճանկար, Դ. դ. վերջ, Միլան, http://en.wikipedia.org:

37. Թեոդորա, 1055-1056 թթ., հիստամենոն նոմիսմա, Sincona AG, Auction 1 (29.06.2011), lot 204, www.acsearch.info:

38. Կամեյոն, հասպիս, Թ.-Ժ. դդ., Վիկտորիա եւ Ալբերտ թանգարան, http://collections.vam.ac.uk:

39. Անդրոնիկոս Ա., 1183-1185 թթ., ասպրոն տրախի, «Խալկիտես» գրությամբ, Freeman և Sear, Manhattan Sale I (05.01.2010), lot 471, www.acsearch.info:

40. Անանուն ֆոլիս, դաս C, 1034-1042 թթ., Auktionshaus H. D. Rauch GmbH, Auction 88 (17.05.2011), lot 768, www.acsearch.info:

41. Փրկչի եկեղեցի, «Քրիստոս Խալկիտես» խճանկար, ԺԲ. դ., Խորա, www.guidesofistanbul.com:

42. Կոստանդին Է., 913-959 թթ., սոլիդ, Sincona AG, Auction 3 (25.10.2011), lot 3506, www.acsearch.info:

43. Անդրոնիկոս Ա., 1183-1185 թթ., ասպրոն տրախի, Numismatica Ars Classica NAC AG, Auction 52 (07.10.2009), lot 1206, www.acsearch.info:

44. Քրիստոսը օծում է Կոստանդին Է.-ին, Ժ. դ., փղոսկրե քանդակազարդ տախտակ, Պուշկինի անվան կերպարվեստի թանգարան, Մոսկվա, ԺԹ. դարում տեղափոխվել է Էջմիածնի գանձարանից, https://commons.wikimedia.org:

45. Ռոմանոս Դ., 1068-1071 թթ., հիստամենոն նոմիսմա, Baldwin's Auctions Ltd, Auction 75 (26.09.2012), lot 2386, www.acsearch.info:

46. Ռոմանոս Դ., 1030-1072 թթ. (կամ Ռոմանոս Բ., 938-963 թթ.) եւ Եւդոկիա, փղոսկրե քանդակազարդ տախտակ, Ֆրանսիայի ազգային գրադարան, http://en.wikipedia.org:

47. Միքայել Ը., 1261-1282 թթ., հիպերպիրոն, www.wildwinds.com:

48. Անդրոնիկոս Բ., 1282-1328 թթ., հիպերպիրոն, Jean Elsen & ses Fils S. A., Auction 110 (10.09.2011), lot 643, www.acsearch.info:

49. Հմայիլ, հեմատիտ, Զ. դ., Եգիպտոս, Մետրոպոլիտեն թանգարան, www.metmuseum.org:

50. Անդրոնիկոս Գ., 1328-1341 թթ., բասիլիկոն, www.coinarchives.com:

51. Հովհաննես Զ., 1250-1305 թթ., Նիկեա, բասիլիկոն, LHS Numismatik AG, Auction 97 (10.05.2006), lot 323, www.acsearch.info:

52. Սանտա Մարիա դե Մուրի վանք, որմնանկար, ԺԲ. դ., Իսպանիա, www.proprofs.com: